



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/23291-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-615-08.06.2023-ԱռՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 723 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քաջախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ [petros.qatsakhyan@gov.am](mailto:petros.qatsakhyan@gov.am)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-615-08.06.2023-ԱՌՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերն ստացվում են մինչև այդ ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, իսկ օրենսգրքի 389-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտադրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված ակցիզային դրոշմանիշերը, ինչպես նաև օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները՝ մինչև այդ ապրանքների օտարումը:

Օրենսգրքի 390-րդ հոդվածում նշված են ներմուծման (համապատասխանության) հավաստագրման ենթակա ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը:

Նախագծում նշվում են հետևյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3003, 3004, 3006 3000 0, 3006 60000, մինչդեռ վերջին երկուսը ներառված չեն օրենսգրքի 390-րդ հոդվածով սահմանված դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում, թեև դրանք նույնպես դեղեր են:

2. Նախագծի ընդունման անհրաժեշտության շրջանակներում հարկ է նկատել, որ օրենսգրքի 390-րդ հոդվածով սահմանված ցանկում առկա չեն նաև այլ դեղեր, որոնք հանդես են գալիս 3002 ԱՏԳ ԱԱ ծածկագրի ներքո (օրինակ՝ իմունաբանական դեղեր), փոխարենն ընդգրկված է 2936 ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, որը վերաբերում է դեղանյութերին և 3003 ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, որը վերաբերում է այն կիսաարտադրանքներին, որոնք դեռևս մանրածախ իրացման համար փաթեթավորված չեն և ներմուծվելուց հետո անցնում են լրացուցիչ արտադրական գործընթաց:

ԱՏԳ ԱԱ ծածկագրերի հետ կապված դիտարկումները առնչվում են նաև նախագծի 1-ին հոդվածի «բ)» և «գ)» կետերին:

Միաժամանակ տեղեկացնում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1088-Ն որոշմամբ ԵԱՏՄ անդամ երկրներից ստացված կենդանիների համար նախատեսված պատվաստանյութերի համար (ԱՏԳ ԱԱ՝ 3002 42 000 0) համապատասխանության հավաստագրի տրամադրման պահանջ սահմանված չէ:

3. Օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները ստացվում են մինչև այդ ապրանքների օտարումը:

Նախագծով առաջարկվում է օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանել, որ ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3003, 3004, 3006 30 000 0, 3006 60 000

Ծածկագրերին դասվող ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների ստացման համար պարտադիր է ներմուծման (համապատասխանության) հավաստագրի առկայությունը, միաժամանակ, հայտի մերժման հիմք նախատեսելով ներմուծման (համապատասխանության) հավաստագրի դեռևս առկա չլինելը: Ներկայացվող կարգավորումները խնդրահարույց են: Նախ, նշված ապրանքատեսակների ներմուծման համար պարտադիր է ներմուծման (համապատասխանության) հավաստագրի առկայությունը: Մյուս կողմից, գործող օրենսդրությամբ մինչև դրոշմավորման ենթակա ապրանքների օտարումը դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարումը և (կամ) գրանցման ենթակա բոլոր տվյալներով դրոշմապիտակների ստացման հայտի ներկայացումը չի դիտվում որպես էլեկտրոնային գրանցումներում կամ դրոշմապիտակների ստացման հայտում նշված ապրանքների օտարում: Մինչև դրոշմավորման ենթակա ապրանքների օտարումը դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցվում են դրոշմավորման ենթակա ապրանքների տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը), քանակությունը և համապատասխան ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների սերիաներն ու հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով):

Վերոնշյալ ողջ փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով, և բացառվում է թղթային եղանակին վերադարձը:

Նախագծով առաջարկվող ծածկագրերին դասվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների ստացման նպատակով գործող օրենսգրքին համապատասխան՝ հարկային մարմին է ներկայացվում էլեկտրոնային հայտ և նախկինում ստացված դրոշմապիտակների օգտագործման վերաբերյալ հաշվետվություն: Կատարվող լրացման համաձայն՝ դրոշմապիտակի ստացման համար պարտադիր է համարվելու ներմուծման (համապատասխանության) հավաստագրի առկայությունը: Սակայն առաջարկվող խմբագրությունից պարզ չէ, թե դրոշմապիտակի ստացման համար հարկային մարմին ներկայացվող էլեկտրոնային հայտին և հաշվետվությանը կից ինչպես պետք է ներկայացվի նաև ներմուծման (համապատասխանության) հավաստագրի օրինակ: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել, որ հայտին կից պետք է ներկայացվի համապատասխանության հավաստագրի օրինակը: Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտ է նախատեսել դրոշմապիտակների ստացման համար հայտերի ներկայացման և դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգերի ու ներմուծման (համապատասխանության) հավաստագրերի տրամադրման համակարգերի ինտեգրման կամ փոխգործելիության հնարավորություն, որի կարգը կսահմանի կառավարությունը:

4. Առաջարկում ենք օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 1-ը՝ հաշվի առնելով Պետական եկամուտների կոմիտեում իրականացվելիք ծրագրային փոփոխությունների անհրաժեշտությունը:

Ամփոփելով վերոշարադրվածը, Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկում է նախագիծը լրամշակել ներկայացված առաջարկությունների հիման վրա:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 723 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-615-08.06.2023-ԱնՀ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.07.2023  
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-615-08.06.2023-ԱնՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (ՀՕ-165-Ն) 393-րդ հոդվածի՝

ա) 3-րդ մասը լրացնելի հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3003, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 ծածկագրերին դասվող ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների ստացման համար պարտադիր է ներմուծման (համապատասխանության) հավաստագրի առկայությունը:».

բ) 5-րդ մասը լրացնելի հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետով.

«3.1) դեռևս առկա չեն ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3003, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 ծածկագրերին դասվող ներմուծվող ապրանքների ներմուծման (համապատասխանության) հավաստագրերը.

գ) 8-րդ մասի 2-րդ կետում «ԱՏԳ ԱԱ 3004 ծածկագրին դասվող» բառերը փոխարինելի «ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3003, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 ծածկագրերին դասվող» բառերով.

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.** «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3003, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 ծածկագրերին դասվող /դեղ, վիտամին, պատվաստանյութ եւ այլն/ (այսուհետ՝ դեղամիջոց) ներմուծվող ապրանքների դրոշմավորման համար սահմանելի առանձին պայման՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի օտարման ժամանակ ներմուծման համապատասխանության հավաստագրի հանգամանքը ֆիքսելու համար՝ բացառելով առանց ներմուծման (համապատասխանության) հավաստագրի դեղամիջոցների օտարումը:

**2. Ընթացիկ իրավիճակը եւ խնդիրները.** Ներկայումս ՀՀ-ում դեղերը դասվում են այն ապրանքների դասին, որոնք օտարվում են դրոշմապիտակավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից: Այդ դրոշմապիտակները դեղամիջոցներն օտարողները ստանում են հարկային մարմնից: Ներմուծվող դեղերի դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակները ստացվում են մինչեւ այդ ապրանքների օտարումը: Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետությունում արգելվում է իրացնելի Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը: Այսինքն, ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002

42 000 0, 3003, 3004, 3006 30 000 0, 3006 60 000 ծածկագրերին դասվող ներմուծվող ապրանքները, բացի դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակներ ունենալուց պետք է գրանցված լինեն ՀՀ-ում բացառությամբ օրենքով սահմանված՝ լիազոր մարմնի թույլտվությամբ ներմուծվող դեպքերի: Դեղամիջոցների ներմուծումը ՀՀ ընթացակարգ է, որն անցնում է փորձաքննություն եւ արդյունքը կարող է լինել բացասական, այսինքն՝ դեղամիջոցի ներմուծումը կարող է մերժվել եւ ներմուծման (համապատասխանության) հավաստագիր չտրամադրվել: Այդ դեպքում, ներմուծման (համապատասխանության) հավաստագիր դեռ չստացած դեղամիջոցները կարող են դրոշմապիտակավորվել եւ առանց ներմուծման (համապատասխանության) հավաստագրի հայտնվել շուկայում:

Մասնավորապես, համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 202 որոշման 1-ին հավելվածի 27-րդ կետի՝ երրորդ երկրից ներմուծման դեպքում դեղագործական արտադրանքի նմուշառումն իրականացվում է մաքսային հսկողության գոտում, իսկ ԵԱՏՄ անդամ երկրից ներմուծման դեպքում՝ հայտատուի պահեստում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, բազմաթիվ դեպքեր են գրանցվել, երբ ոչ բարեխիղճ ներմուծողները ԵԱՏՄ-ից ներմուծման պարագայում, առանց ներմուծման (համապատասխանության) հավաստագիր ստանալու դեղամիջոցներն օտարում են:

Վերը նշված դեպքերում, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի, օրենքով սահմանված կարգով չգրանցված, կամ գրանցումը կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը բաշխելը կամ իրացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում: Այս իրողության պայմաններում, ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչությունը կատարելով իրեն վերապահված գործառույթները դեղատներում հանդիպում է օտարվող այնպիսի դեղեր, որոնք դրոշմապիտակավորված են, սակայն ներմուծման (համապատասխանության) հավաստագրեր դեռ չեն ստացել:

### **3. Կարգավորման նպատակը եւ բնույթը.**

Առաջարկվող կարգավորումներով՝ ներմուծման ժամանակ ներմուծման հավաստագրի (համապատասխանության) առկայությունը դրոշմապիտակի վրա պարտադիր լինելու հանգամանքը ֆիքսելը, կհանգեցնի նրան, որ դեղամիջոցների օտարումը կլինի դրոշմավորված եւ միաժամանակ ներմուծման հավաստագրի (համապատասխանության) առկայությամբ:

Այսինքն՝ ներմուծվող դեղամիջոցը կօտարվի ներմուծման հավաստագրի (համապատասխանության)՝ նմուշառման եւ փորձագիտական դրական եզրակացություն ստանալուց հետո, այսպիսով նպաստելով ՀՀ-ում շրջանառվող դեղերի անվտանգության բարձրացմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձիք. Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից: Նախագիծը քննարկվել է կառավարության, ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչության համապատասխան մասնագետների, դեղերի մանրածախ եւ մեծածախ գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների, ինչպես նաեւ դեղագործական ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: